ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Լատվիայի Հանրապետության Ռիգա քաղաք կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Նազիկ Մարգարյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության էներգաարդյունավետության և տեխնիկական նորմատիվների բաժնի գլխավոր մասնագետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

   Լատվիայի Հանրապետություն, քաղաք Ռիգա, 2025 թվականի նոյեմբերի 23-27-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Միջազգային էներգետիկ գործակալություն (IEA)

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն Միջազգային էներգետիկ գործակալության (ՄԷԳ) կողմից իրականացվող EU4Energy ծրագրի շրջանակներում կազմակերպված էներգետիկ հարցերի երկրորդ փուլի եզրափակիչ քաղաքական «Էներգետիկ անվտանգություն» թեմայով ֆորումին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   1. Էներգետիկ անվտանգության ապագան.
      - Պահանջարկի, մատակարարման և առևտրի միտումների ազդեցությունը վառելիքի անվտանգության վրա;
      - Եվրոպական Միության համար նոր էներգետիկ անվտանգության շրջանակի կառուցում:
   2. Էներգետիկ անվտանգության երեք ոսկե կանոնները՝
      - դիվերսիֆիկացում
      - կանխատեսելիություն
      - համագործակցություն
   3. Կարևորագույն էներգետիկ ենթակառուցվածքների պաշտպանությունը ֆիզիկական սպառնալիքներից և կիբերսպառնալիքներից:
   4. Արտակարգ իրավիճակների արձագանք – Պահանջարկի սահմանափակում և բեռի կրճատում:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Միջոցառումը ներառում էր էներգետիկ անվտանգության տարբեր ասպեկտներին առնչվող նիստեր՝ էներգետիկ անվտանգության ապագային նվիրված ՄԷԳ գագաթնաժողովի վերջին եզրակացություններով:

Զեկույցներ ներկայացվեցին Մեծ Բրիտանիայում կիրառվող մոտեցումների, պետական աջակցության, կարգավորման մեխանիզմների վերաբերյալ:

Ֆորումի ընթացքում ելույթներով հանդես եկան Հայաստանի, Ուկրաինայի, Խորվաթիայի, Լատվիայի և այլ երկրների ներկայացուցիչներ: Մատնանշվեցին անհրաժեշտ առաջնահերթ միջոցառումները, որոնք կբերեն էներգետիկ անվտանգության մեծացմանը:

Ներկայացվեցին էներգետիկ անվտանգության նկատմամբ մոտեցումը վերանայելու ուղիները՝ հիմնվելով նոր տեխնոլոգիաների և զարգացող մարտահրավերների վրա, կարևորագույն էներգետիկ ենթակառուցվածքների պաշտպանությունը ֆիզիկական և կիբերսպառնալիքներից, պաշարների պահպանման և արտակարգ իրավիճակներին արձագանքման դերը:

Ծրագրի շրջանակներում կազմակերպվեց տեխնիկական այց Լատվիայի Ինչուկալնյան ստորգետնյա գազի պահուստավորման կայան, որը իրենից ներկայացնում էր 700 մետր խորության վրա գտնվող բնական ճանապարհով առաջացած կրաքարե շերտ, որտեղ հատուկ տեխնոլոգիաների միջոցով հնարավորություն էր լինում կուտակել մինչև 4,3 միլիարդ խորանարդ մետր գազ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Միջազգային էներգետիկ գործակալության ներկայացուցչի կողմից նշվեց, որ EU4Energy ծրագրի երրորդ փուլը կմեկնարկի 2026 թվականի հունվարից: Պայմանավորվածություն ձեռք բերվեց հետագա համագործակցության ձևաչափի, աշխատանքային հանդիպումների կազմակերպման անհրաժեշտության և իրականացման վերաբերյալ:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը՝**

Նազիկ Մարգարյան

01.12.2025թ.